# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ 10-ԱՄՅԱԿԸ

Հունվարի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-ամյակը: Կիրակնօրյա այս առավոտյան Մայր Տաճարում հավաքվածների հոծ բազմության մեջ իրենց համազգեստներով առանձնանում էր զինվորականների խումբը. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Սուրբ Պատարագի էր եկել հայոց բանակի բարձրագույն սպայական ողջ անձնակազմը՝ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի գլխավորությամբ:

Պատարագի ընթացքում հանդիսավոր կերպով ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ Հայոց բանակի հոբելյանի առիթով (տե՛ս էջ 15): Ապա կատարվեց Հանրապետական մաղթանք: Սրբազան արարողության ավարտին կատարվեց հոգեհանգստյան պաշտոն զոհված ազատամարտիկների հոգիների խաղաղության համար:

Հավարտ Ս. Պատարագի Վեհարանի դահլիճում Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ բանակի 10-ամյակին նվիրված հանդիսություն:

Հանդիսության ընթացքում ընթերցվեց Վեհափառ Հայրապետի երկրորդ կոնդակը (տե՛ս էջ 17), որով Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով, ծննդյան 75-ամյակի առթիվ, պարգևատրվեց ՀՀ Նախագահի զինվորական գծով խորհրդական և զինված ուժերի ռազմական տեսուչ գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը՝ իր քաջակորով և գործուն մասնակցությամբ հաղթանակով պսակված կարևոր ու վճռական շատ մարտերի, հատկապես Շուշիի ազատագրումը, ինչպես նաև հայրենիքին մատուցած այլ ծառայությունների համար:

Շնորհավորելով զորահրամանատարներին Հայոց բանակի հոբելյանի առիթով՝ Վեհափառ Հայրապետն ասաց. «Թող Աստված ամուր, զորեղ և հաղթական պահի ձեր աջը, աննկուն՝ ձեր կամքը, միշտ արի ու հաղթական՝ ձեր հոգին, որպեսզի երբեք չխաթարվի անդորրը մեր կյանքի այս փոքրիկ աշխարհում, որի մեծության տեսիլքը միշտ կրում ենք մեր հոգում, որը մեզ ոգեշնչում է, որը մեզ զորեպնդում է, որը մեզ մղում է նոր սխրանքների»:

Իր հերթին պաշտպանության նախարարը Ամենայն Հայոց Կաթողիկոսին պարգևատրեց ՀՀ պաշտպանության նախարարության «Զինանշան» հուշամեդալով:

«Վստահ եղեք, որ այսօրվա փառահեղ Պատարագը շատ երկար ժամանակ մեզ կոգևորի, այս փառահեղ Պատարագը երկար ժամանակ մեզ կստիպի աշխատել շատ ավելի լավ, քան մենք այդ անում էինք: Փառք Աստծո, այսօր մենք ունենք պետություն, փառք Աստծո, այսօր մենք ունենք բանակ, փառք Աստծո, այսօր մենք կարող ենք ճակատներս բաց նայել մեր քույրերին, մեր կանանց, մեր երեխաներին»,- ասաց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: